



ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ Ս. Թ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիրակի, 11 Մայիս, երկույեան ժամը 4ին, Ժառանգաւորաց Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ տարեկան դաշտահանդէսը Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանին, ի ներկայութեան ծնողներու և ժողովուրդի կոկիկ քաղմութեան:

Ծուրջ երկու ժամերու ընթացքին, Վարժարանին երկսեռ աշակերտութիւնը, երկուական մրցորդ խումբերու բաժնուած, ցուցաբերեց տարուան մը մարզական ճիգերուն արդիւնքը: Վարժարանի նոր մարզիչ Պր. Յակոբ Մէնէշեան յաջողած էր ուրիշ տարիներու յայտագրին վրայ կանոնաւորաբար տեղ բռնող խաղերէն քացի, հետաքրքրական մէկ-երկու խաղեր ևս աւելցնել, որոնք կատարուեցան մարզիկներուն կողմէ անթերի յաջողութեամբ, և որոնք խլեցին բոլոր ծափեր հանդիսականներէն:

Յայտագրի աւարտին, մրցանակաբաշխութիւնը կատարեց Տեսուչ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, պարգևատրելով յաջող մարզիկները բաժակներով ու մետալներով:

Ներկաները գոհունակութեամբ բաժնուեցան խաղավայրէն, ի տես իմացական կրթանքին քովն ի վեր Վարժարանին ընծայած կարևորութեան նաև մարմնակրթանքի մարզէն ներս:

